# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 սեպտեմբերի 2018 թվականի N 58

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 15 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը.

1. Արմեն Եղիազարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին.
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և վարձակալությամբ տրամադրելու մասին.
3. Արամուս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 72 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
4. Կամարիսի «Կակաչ» մանկապարտեզ հաճախող Արամուս համայնքի երեխաների վճարների մի մասը փոխանցելու մասին.
5. Արամուս համայնքի Կենտրոնական փողոցը հարող սելավատարների մաքրման համար գումար հատկացնելու մասին.
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

5.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 սեպտեմբերի 2018 թվականի N 59

## *ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետի, "Քաղաքաշինության մասին" օրենքի $14^3$-րդ հոդվածի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 59 որոշումը ու Արմեն Լյովայի Եղիազարյանի դիմումը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

**1.** Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի՝ Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող, Արմեն Լյովայի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0055-0032 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական 0,1հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի՝ բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

5.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 սեպտեմբերի 2018 թվականի N 60

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ և 29-րդ կետերի, "Քաղաքաշինության մասին" օրենքի 14$^{3}$ հոդվածի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի ու 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի "ը" ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 59 որոշումը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 07-013-0158-0046 կադաստրային ծածկագրով 3,8778հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի (հիմք՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 20-ի N ԼՎ-076 լեռնահատկացման ակտ, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 20-ի օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/076 թույլտվություն և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 20-ի N ՊՎ-076 օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիր) վարձակալությամբ «Ա. Ա. Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ին տրամադրել սույն որոշման 1-ին կետում նշված՝ 3,8778հա փոփոխված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը՝ 18 (տասնութ) տարի ժամկետով, տարեկան 482000 (չորս հարյուր ութսուներկու հազար) դրամ վարձավճարով:
3. Հողամասը տրամադրվում է ընդերքօգտագործման նպատակով:
4. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ներառել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

5.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2018 թվականի N 61

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 72 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արամուս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի "Արամուսի Մարզամշակույթային Կենտրոնի աշխատակիցների 2018 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" N 72 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետի «15» թիվը փոխարինել «16» թվով.

2) Որոշման հավելվածի 12-րդ տողի 3-րդ և 4-րդ սյունակների «5» և «473424» թվերը փոխարինել համապատասխանաբար «6» և «554424» թվերով իսկ 13-րդ տողի 3-րդ և 4-րդ սյունակների «15» և «1553328» թվերը փոխարինել համապատասխանաբար «16» և «1634328» թվերով.

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

5.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 սեպտեմբերի 2018 թվականի N 62

## *ԿԱՄԱՐԻՍԻ «ԿԱԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով *համայնքի ավագանին որոշում է.*

1. Կոտայքի մարզի Կամարիս համայնքի «Կակաչ» մանկապարտեզ Արամուս համայնքից հաճախող յուրաքանչյուր երեխայի համար ծախսվող 22000 (քսաներկու հազար) դրամից 14000 (տասնչորս հազար) դրամը փոխանցել Արամուս համայնքի բյուջեից.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

5.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 սեպտեմբերի 2018 թվականի N 63

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԸ ՀԱՐՈՂ ՍԵԼԱՎԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Արամուս համայնքի Կենտրոնական փողոցը հարող սելավատարների մաքրման համար համայնքի բյուջեից օգտագործել համապատասխան միջոցներ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

5.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ